



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 03 » մարտի 2015 թ.

N 16

ք. Ստեփանակերտ

Ջ.Լ.Օսիպյանին ԼՂՀ դատախազության դատախազների և քննիչների ծառայողական առաջխաղացման ցուցակից հանելու մասին

ԼՂՀ գլխավոր դատախազի թիվ 52 առ 12.06.2009թ. հրամանով՝ ԼՂՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի եզրակացության հիման վրա (արձանագրություն N 02 առ 23.04.2009թ.), ԼՂՀ գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված և ընդհանուր բնույթի հանցագործությունների գործերով բաժնի ավագ դատախազ, արդարադատության 2-րդ դասի խորհրդական Ջ.Լ.Օսիպյանը ընդգրկված էր ԼՂՀ դատախազության դատախազների և քննիչների ծառայողական առաջխաղացման ցուցակում:

Հաշվի առնելով, որ վերոնշյալ բաժինը, համաձայն ԼՂՀ դատախազության նոր կառուցվածքի, լուծարվել է և ԼՂՀ գլխավոր դատախազի թիվ 14 առ 02.03.2015թ. հրամանով Ջ.Լ.Օսիպյանը նշանակվել է ԼՂՀ գլխավոր դատախազության ավագ դատախազի պաշտոնին, ղեկավարվելով «Դատախազության մասին» ԼՂՀ օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասով և 10-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. ԼՂՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ, արդարադատության 2-րդ դասի խորհրդական Ջոյա Լյուդվիգի Օսիպյանին հանել ԼՂՀ դատախազության դատախազների և քննիչների ծառայողական առաջխաղացման ցուցակից:

2. Հրամանն ուղարկել ԼՂՀ գլխավոր դատախազի տեղակալներին, ԼՂՀ գլխավոր դատախազության ավագ դատախազին ու դատախազին, բաժնիների պետերին, ԼՂՀ քաղաքապետախազներին:

3. Հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Արդարադատության երրորդ դասի  
պետական խորհրդական**

**Ա.Ա.Մոսիյան**